ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"26" հունիսի 2024թ. N 1215-L

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գաղտնիքի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 53-Ն որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 698-L որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից տնօրինվող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը՝ համաձայն Հավելվածի:

6/26/2024

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի
2024 թվականի հունիսի 26-ի
N 1215-Լ հրամանի

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԳԱՂՏՆԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N/N Հ/Հ	Գաղտնագրման ենթակա տեղեկության անվանումը	Գաղտնիության աստիճանը
	1. ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1. կ. 7	Ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց անվանումների, բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների վերաբերյալ տեղեկություններ	Գաղտնի
2. կ. 7	Սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման մշակումների գնումների հետ կապված պայմանագրեր, տեղեկություններ և հաշվետվություններ	Գաղտնի
3. կ. 7	Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման բյուջետային ծրագրի հայտերը՝ բացառությամբ ոչ ֆինանսական ցուցանիշները, հիմնավորումները և հաշվարկները պետական բյուջեում վերաբաշխում կատարելու վերաբերյալ առաջարկները, հիմնավորումներ, գնման անվանացանկը պարունակող տեղեկությունները:	Հույժ Գաղտնի
4. կ. 7	ՀՀ զինված ուժերի կարիքների բավարարման նպատակով կնքված գնման պայմանագրերին առնչվող վեճերի լուծմանն ուղղված դատավարական փաստաթղթեր և այլ գրագրություն	Գաղտնի
5. կ. 8	Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպություններում սպառազինության և ռազմական տեխնիկան մշակելու, կառույցների, տեխնոլոգիայի, պատրաստման, գտնվելու վայրը, կիրառման կամ շահագործման ուղղությունները բացահայտող տեղեկությունները	Գաղտնի
6. կ.10	Ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի պատրաստության ապահովման, հիմնական ուղղություններով մալուխային և ռադիոռելեային գծերի կառուցման, վերակառուցման, ինչպես նաև արբանյակային կապի վերգետնյա կայանների, ռադիոկենտրոնների և պաշտպանված կապի հանգույցների կառուցման ու պաշտպանության և անվտանգության շահերից բխող կապուղիների հատկացման վերաբերյալ տեղեկությունները	Գաղտնի
7. կ.10	Ռազմական դրության ժամանակ կապի օբյեկտների ռազմականացված ուժերով պահպանման կազմակերպումը բացահայտող տեղեկությունները	Գաղտնի

8. կ.10	Ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի պատրաստության ապահովման, հիմնական ուղղություններով մալուխային և ռադիոռելեային գծերի կառուցման, վերակառուցման, ինչպես նաև արբանյակային կապի վերգետնյա կայանների, ռադիոկենտրոնների և պաշտպանված կապի հանգույցների կառուցման ու պաշտպանության և անվտանգության շահերից բխող կապուղիների հատկացման վերաբերյալ տեղեկությունները	Գաղտնի
9. կ.10	Ռազմական դրության ժամանակ կապի օբյեկտների ռազմականացված ուժերով պահպանման կազմակերպումը բացահայտող տեղեկությունները	Գաղտնի
10. կ.10	Կառավարական կամ այլ հատուկ կապի, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի կողմից վարձակալվող կապի միջոցների և կապուղիների տեսակների և աշխարհագրական կոորդինատների (հասցեների), ռադիոկապի և ռադիոհեռարձակման միջոցների տեսակների, տեխնիկական և գործառնական հնարավորությունների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները	Գաղտնի
11. կ.10	Էլեկտրոնային հաղորդակցության ենթակառուցվածքների և տեխնոլոգիաների զարգացման անվտանգային բաղադրիչ պարունակող ծրագրերը և գործընթացները բացահայտող տեղեկությունները	Գաղտնի
12. կ.10	ՀՀ զինված ուժերի պաշտպանության ռադիոլոկացիոն, տեսակապերի և ռազմական գիտատեխնիկական և այլ բնույթի համագործակցության գնումների հետ կապված պայմանագրեր, տեղեկություններ և հաշվետվություններ	Գաղտնի
13. կ.10	Պաշտպանության և անվտանգության ապահովման նպատակով ռադիոկապի և արբանյակային կապի համակարգերի և ցանցերի կազմակերպման ու շահագործման վերաբերյալ տեղեկությունները	Գաղտնի
14. կ.10	Ռադիոպաշտպանության համար օգտագործվող տեխնիկական միջոցների տեսակները և դրանց բնութագրերը, տեղակայման վայրերը, ինչպես նաև հատուկ նշանակության ռադիոխանգարիչ և ռադիոճնշիչ կայանների կողմից առաջացրած խանգարումներից կապուղիների պաշտպանության եղանակները բացահայտող ամփոփ տեղեկությունները	Գաղտնի
15. կ.10	Ռազմական դրության ժամանակ հեռուստատեսային օբյեկտների շահագործման և հեռուստատեսային հեռարձակման համար օգտագործվող արբանյակային կապի միջոցների, ինչպես նաև հեռահաղորդակցության կապուղիների կազմակերպման նպատակով դրանք օգտագործելու վերաբերյալ ամփոփ տեղեկությունները	Գաղտնի
16. կ.10	ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի արբանյակային կապի, ռադիոկապի միջոցների աշխատանքի, կառավարական կապի համակարգերի և ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման մասին տեղեկությունները	Գաղտնի
2. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
17. կ.18	Փոստային կապի ցանցերի կազմակերպման և զարգացման անվտանգային բաղադրիչ պարունակող ծրագրերը և գործընթացները բացահայտող տեղեկությունները	Գաղտնի

18. կ.18	Հատուկ կապի միջոցով հույժ գաղտնի և գաղտնի ներդրվածքով փոստային առաքանիների քանակի, պահպանման, փոստային երթուղիների և փոխանակման կետերի մասին տեղեկությունները	Հույժ գաղտնի
19. կ.18	Ռազմական դրության ժամանակ փոստային կապի համակարգի կազմակերպման գործընթացները բացահայտող տեղեկությունները	Գաղտնի
20. կ.18	ՀՀ ռազմարդյունաբերական ոլորտին վերաբերվող՝ ռազմական, գիտատեխնիկական համագործակցության, ինչպես նաև համատեղ գիտատեխնիկական նախագծերի վերաբերյալ տեղեկությունները, որոնց տարածումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին	Գաղտնի
21. կ.18	Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա ներկայացուցիչների հետ թվայնացման, գիտատեխնիկական, բարձր տեխնոլոգիական, կապի և հեռահաղորդակցության ոլորտներում իրականացված բանակցությունների ամփոփ արդյունքները բացահայտող տեղեկություն (գործուղման հաշվետվություն, փոխըմբռնման հուշագիր, տեղեկանք, գրություն, հաղորդագրություն, ծանուցում և այլ ձևաչափեր), որի վաղաժամ հրապարակումը կարող է բացահայտել ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարությունը և վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության պետական շահերին և ազգային անվտանգությանը:	Գաղտնի
22. կ.18	Երրորդ կողմերի միջոցով ցուցահանդեսների, համաժողովների, հանդիպումների ու քննարկումների և այլ նմանատիպ միջոցառումների շրջանակում, ինչպես նաև ուղղակի նամակագրությամբ ստացված բարձր տեխնոլոգիական, թվայնացման, գիտատեխնիկական, ռազմարդյունաբերական, կապի և հեռահաղորդակցության ոլորտներում գործունեության մասին տեղեկություն, որի վաղաժամ տարածումը կարող է բացահայտել ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարությունը և վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության պետական շահերին և ազգային անվտանգությանը:	Գաղտնի
23. կ.18	Համագործակցություն միջազգային կամ ներպետական կառույցների հետ ամպային լուծումների, կրիտիկական տեղեկատվական և խոցելի ենթակառուցվածքների վերաբերյա հետազոտություններ իրականացնելու նաև նրանց բովանդակությունը և ուղղվածությունը բացահայտող տեղեկությունների հետ կապված աշխատանքներ, որոնց տարածումը կարող է սպառնալիք հանդիսանալ ՀՀ ազգային անվտանգության կամ պետական շահերի համար:	Գաղտնի
24. կ.18	Թվային քարտեզներում (օր.՝ Google maps, Yandex map) Հայաստանի Հանրապետության օբյեկտների տեղակայման և անվանումների հետ կապված աշխատանքներ:	Գաղտնի
25. կ.18	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից կազմակերպվող միջազգային գործարար ֆորումների, ցուցահանդեսների ընթացքում ՀՀ ընկերությունների կողմից ձեռք բերված ռազմական, գիտատեխնիկական և երկակի նշանակության ապրանքների և ծառայությունների մատակարարումներին առնչվող նախնական պայմանավորվածությունների և կնքված համագործակցության փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություններ	Գաղտնի
26. կ.18	Կրիտիկական/խոցելի թվային համակարգերի տեխնիկական բնութագրերի մշակման, գնման, ֆինանսավորման հարցերին առնչվող նաև նրանց բովանդակությունը և ուղղվածությունը բացահայտող տողոկությունների հետ կապված աշխատանքներ, որոնց տարածումը կարող է սպառնալիք հանդիսանալ ՀՀ ազգային անվտանգության կամ պետական շահերի համար:	Գաղտնի

3. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
27. կ.20	Հայաստանի Հանրապետությունը հնարավոր զինված հարձակումներից պաշտպանելու վերաբերյալ նախապատրաստական ծրագրերի բովանդակության, ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպություններում ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի, արտադրության, նորոգման գծով կարողությունների, ռազմական հումքի ու նյութերի պահեստավորման և մատակարարումների ծավալի մասին տեղեկությունները	Հույժ գաղտնի
28. կ.20	Ուժեղացված և ռազմական դրության աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին պլան	Հույժ գաղտնի
29. կ.20	Զորահավաքային առաջադրանքների ծավալները և զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների ցանկերը	Գաղտնի
30. կ.20	Զորահավաքային ամրագրման ենթակա պաշտոնների և մասնագիտությունների ընդհանրացված ցանկեր	Գաղտնի
31. կ.20	«Հատուկ կապ» ՓԲԸ-ում գտնվող զենքի և զինամթերքի պահպանման և պահպանության վերաբերյալ տեղեկություններ	Գաղտնի
32. կ.20	«Հայփոստ» ՓԲԸ-ում գտնվող զենքի և զինամթերքի պահպանման և պահպանության վերաբերյալ տեղեկություններ	Գաղտնի
33. կ.21	Կիբեռանվտանգության ապահովման հետ կապված կենսական նշանակության ծառայության մատուցման համար կիրառվող կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների մեթոդաբանության սահմանման, կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների ցանկի հաստատման ընթացակարգը, որորնց տարածումը կարող է սպառնալիք հանդիսանալ ՀՀ ազգային անվտանգության կամ պետական շահերի համար:	Գաղտնի
34. կ.21	Տվյալների դասակարգման և քարտեզագրման հետ կապված աշխատանքները, որոնց տարածումը կարող է սպառնալիք հանդիսանալ ՀՀ ազգային անվտանգության կամ պետական շահերի համար:	Գաղտնի
35. կ.21	Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով օգտագործվող հեռահաղորդակցության ենթակառուցվածքների (կապի ցանցեր, մալուխային և ռադիո ռելեային գծեր, ռադիոկապի և արբանյակային կապի համակարգեր) և կապի հատուկ տեխնոլոգիաների մասին տեղեկությունները	Գաղտնի
36. կ.21	Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման նպատակով օգտագործվող հեռահաղորդակցության ենթակառուցվածքների (կապի ցանցեր, մալուխային և ռադիո ռելեային գծեր, ռադիոկապի և արբանյակային կապի համակարգեր) և կապի հատուկ տեխնոլոգիաների մասին տեղեկությունները	Գաղտնի

37. կ.22	Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների պետական պաշտպանական պատվերների ծավալների, ծրագրերի, սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման, մատակարարումների, դրանց արտադրական կարողությունների առկայության և զարգացման մասին, ինչպես նաև այդ նպատակով կազմակերպությունների միջև ստեղծված փոխհամագործակցության կապերի, սպառազինությունները և ռազմական տեխնիկան արտադրողների կամ տեխնիկական և գիտական մշակումներ կատարողների մասին տեղեկությունները	Հույժ Գաղտնի
38. կ.24	Կառավարման պահուստային կետի գտնվելու վայրի, նշանակության մասին տեղեկություններ	Գաղտնի
39. կ.24	Քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ տարահանման երթուղիների և տեղաբաշխման վայրերի ու դրանց հնարավորությունների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ	Գաղտնի
40. կ.25	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության քաղպաշտպանության պլան	Գաղտնի
41. կ.25	Հանրապետական կապի ծառայության քաղպաշտպանության պլան	Գաղտնի
42. կ.26	Զորահավաքային պահուստի կառուցվածքի, փաստացի չափի, դրանց տեղաբաշխման, ֆինանսների և բյուջետային քաղաքականության մասին տեղեկություններ	Գաղտնի
43. կ.27	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության զորահավաքային ծրագրերի պաշտպանության բնագավառի պլանների, դրանցում ընդգրկված ուժերի և միջոցների, իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները	Գաղտնի
44. կ.28	Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով անցկացվող գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական կամ նախագծային աշխատանքների բովանդակությունը և ուղղվածությունը բացահայտող տեղեկությունները	Գաղտնի
45. կ.28	Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով անցկացվող գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական կամ նախագծային աշխատանքների ընթացքի և վերջնարդյունքների մասին տեղեկություններ	Գաղտնի
46. կ.28	Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վերաբերյալ ուղեկցող գրությունները, պայմանագրերի հիմնական դրույթները բացահայտող տեղեկությունները, հաշվարկային այն տողերը որոնց գնման առարկան ձեռք է բերվել գաղտնի ընթացակարգով, հաշվարկների համար հիմնվորում հանդիսացող փաստաթղթերը պարունակող տեղեկությունները,	Գաղտնի
47. կ. 36	ՀՀ պաշտպանունակության և անվտանգության նպատակով տիեզերական տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների կիրառման և զարգացման աշխատանքների հետ կապված պայմանագրեր, տեղեկություններ և հաշվետվություններ	Գաղտնի
48. կ. 36	Տիեզերական տեխնոլոգիաների, տեխնիկայի և օբյեկտների մշակման նախագծերի մասին տեխնիկական բնութագրեր պարունակող տեղեկություններ	Գաղտնի

49. կ. 36	ՀՀ պետական կարիքների բավարարման նպատակով ստեղծվող և(կամ) ձեռք բերվող տիեզերական օբյեկտների և տիեզերական տեխնիկայի այն բնութագրիչները, որոնք Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան կոնվենցիաներով և ՀՀ ոլորտային օրենսդրությամբ չեն համարվում պարտադիր բաց տեղեկատվություն	Գաղտնի
50. կ. 36	ՀՀ պետական կարիքների բավարարման նպատակով ձեռք բերված տիեզերական գործունեության բնագավառի ծառայությունների տեխնիկական բնութագրիչները և արդյունքների մանրամասն նկարագիրը	Հույժ գաղտնի
51. կ. 36	Արտերկրյա և տեղական այն ընկերությունների անունները, որոնց հետ քննարկումներ, բանակցություններ են ընթանում ՀՀ պետական կարիքների բավարարման նպատակով պայմանագիր/ համաձայնագիր ստորագրելու նպատակով	Գաղտնի